

ճանի մը յանգած ըլլալով, ինք այլևս իր տեղը՝ այս-  
 ինքն Տիգրանակերտի Բարձրահայեաց Ս. Աստուածած-  
 նի վանքը կը գառնայ: Կ. Պոլսէն չմեկնած, իր միջ-  
 նորդութեամբ, Աստուածատուր պատրիարք վարդա-  
 պետական գաւազանի իշխանութիւն կու տայ Մարտի-  
 րոս Ղրիմեցիին (28 Սեպտ.), ու ինք կ'անցնի Ակիւ-  
 տար՝ շարունակելու համար իր ճամբան: Բայց ազգին  
 իշխանաւորները խորհելով թէ Եղիազարի նման խօս-  
 քով ու գործքով յաջողակ ու հնարամիտ մէկու մը  
 ներկայութիւնը կարևոր է Երուսաղէմի մէջ, որպէսզի  
 թագաւորական հրովարտակը արձանագրել տայ տեղին  
 դատարանին մէջ ու հետապնդէ անոր գործադրու-  
 թիւնը, Հոկտեմբեր 5ին՝ հետերինն ունենալով Երեւ-  
 միան, անոր ետեւէն կը հասնին Ակիւտար ու կը հա-  
 մոզեն՝ ետ կենալ Տիգրանակերտ երթալու դիտաւորու-  
 թենէն, ու հետեւեալ օրը զայն կը դարձնեն Գուժ-  
 գափու: Աստուածատուր իսկոյն իրեն փոխանորդ կը  
 կարգէ Եղիազարը, որ երեք օրէն, Հոկտ. 9ին, ճամ-  
 բայ կ'ելլէ դէպի Երուսաղէմ:

Եղիազարի մեկնելէն վեց օր ետք (15 Հոկտ. Դշ.)  
 Սիսի Թորոս կաթողիկոսը Ակիւտարի վրայով կը հասնի  
 Կ. Պոլիս ու կ'իջևանի Ս. Աստուածածնի եկեղեցին:  
 Յաջորդ Շաքաթ ու Կիրակի օրերը կը քարոզէ հոն,  
 Հոկտ. 26ին կը պատարագէ ու 30ին կը մեկնի Ադ-  
 րիանուպոլիս և մէկ ամիս ու հինգ օր ետք (1 Դեկտ.)  
 կը վերագառնայ Կ. Պոլիս:

Թէև Եղիազար և Մուղնեցի հեռացած էին մայ-  
 րաքաղաքէն՝ բայց իրենց կողմնակիցներու կիրքերը  
 չէին հանգարտած տակաւին ու հակամարտութիւնները  
 կը շարունակուէին երկուստեք: Մուղնեցիի համա-  
 կերները միշտ կը գրէին Յակոբ կաթողիկոսի, ի նպաստ  
 իրենց պաշտպանեալին, ու կ'աշխատէին վերագարձնել